ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Լենտեքս ՍՊԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
6	Լենտեքս	Լենտեքս	Լենտեքս	Լենտեքս ՍՊԸ	Կիտել-տաբատ: Կիսաբրդյա կոստյումը բաղկացած է կիտելից և ազատթող փողքերով տաբատից: Կիտելը բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը կոճկվում են 4 ՀՀ զինանշանի պատկերով 22մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները /գրպանների կափույրներ, օձիք/, նույնպես

					կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպաների ձևավոր կափույրները կոճկվում են մեկական ՀՀ զինանշանի պատկերով 14մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով, իսկ կողքերից՝ կտրվածքով, կափույրներով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ, թևերը ներկարված: Աստառը՝ մետաքսյա կամ համարժեք դեղնականաչավուն գույնի կտորից: Ձախ լանջափեշին ներսամասից մշակվում է կտրվածքով ծոցագրման, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Ազատթող տաբատը կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Գուլֆիկը

					մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 6 հատ կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում է 1.5-2մմ լայնությամբ կապույտ գույնի մահուդից երիզներ: Առաջամասում մինչև ծնկները մշակվում է մետաքսյա արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գույնի կտորից աստառ: Կոստյումը՝ 2311 արտիկուլի կամ համանման կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից 300 գրամ 1մ2 մակերեսային խտությամբ 75% բրդի և 25% պոլիէսթեր բաղադրության: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Կիտելի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ, իսկ վերևից 3-րդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը:

					Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Մատակարար կազմակերպությունը պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի կտորի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ՝ ՀՀ-ում հավատարմագրված որևէ կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Փորձաքննության դրական արդյունքներից հետո ներկայացնել նմուշ՝ հաստատելու համար համապատասխան

					ստորաբաժանմանը: Պատվիրատուն իրավունք ունի՝ յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակից կատարել նմուշառու և ուղարկել փորձաքննության:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Лентекс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
6					